YAMAHA
Make Waves

Yamaha Music Gulf

ԿՐԹԱԹՈՇԱԿԱՅԻՆ 2022/23 ԾՐԱԳԻՐ

Yamaha Music Gulf-ն մեկ տարվա ընդմիջումից հետո սիրով հայտարարում է 2022/23 թվականների կրթաթոշակային ծրագրի մեկնարկի մասին: Ծրագրի նպատակն է՝ նպաստել տեղական երաժշտական մշակույթի զարգացմանը՝ աջակցելով երիտասարդ երաժիշտներին իրենց ստեղծագործական ներուժի իրացման և երաժշտական կարիերայի հեռանկարների զարգացման գործում: Մենք ընտրել ենք կլարնետը ծրագրի 7-րդ փուլի համար և հորդորում ենք ծրագրին համապատասխանող կլարնետահար-ուսանողներին դիմել նման հնարավորությունից օգտվելու համար:

1. Ծրագիր

- 2022/23 կրթաթոշակային ծրագիրը կիրականացվի կլարնետի համար
- Կրթաթոշակային մրցանակ - Յամահա մոդելի 1 կլարնետ, որը կտրվի 6 ընտրված կրթաթոշակ ստացողներից յուրաքանչյուրին
- Եզրափակիչ փուլ անցած մասնակիցները կընտրվեն դիմորդների ելույթների տեսագրությունների հիման վրա
- Վերջնական լսումները տեղի կունենան Դուբայում, ԱՄԷ, 2023 թվականի փետրվար ամսին:
- Եզրափակիչ փուլ անցած մասնակիցների ճանապարհորդության և տեղավորման ծախսերը կհոգան կազմակերպիչները:
- Եզրափակիչ փուլ անցած մասնակցին կարող է ուղեկցել իր ուսուցիչը/պրոֆեսորը

2. Ծրագրին մասնակցելու համապատասխանություն

Տարիքային սահմանափակումներ:
Կրթաթոշակային ծրագրին կարող են մասնակցել ներքոհիշյալ տարածաշրջանների բոլոր կլարնետահարները, ովքեր ծնվել են 2001 թվականի հունվարի 1-ից մինչև 2006 թվականի դեկտեմբերի 31-ը: Գրանցվելու պահին պարտադիր իրականացվում է տարիքային ստուգում:

Երկրներ:
Կրթաթոշակ կարող են ստանալ հետևյալ երկրներում և շրջաններում մշտապես բնակվող ուսանողները՝
I խումբ - Մերձավոր Արևելք, Արևմտյան Ասիա և Աֆրիկա
II խումբ - Հայաստան, Ադրբեջան, Վրաստան, Ղրղզստան, Մոլդովա, Թուրքմենստան, Ուզբեկստան, Ուկրաինա*:

Մասնակցել կարող են նաև ուկրաինական անձնագրեր ունեցողները, ովքեր ժամանակավորապես չեն գտնվում Ուկրաինայի տարածքում, բայց մշտապես բնակվել են երկրում մինչև 2022 թվականի փետրվարի 24-ը:

3. Հայտերի ներկայացման կարգը

Դիմորդները իրենց երկրում գործող Yamaha-ի դիստրիբյուտորներին պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը (էլեկտրոնային փոստով կամ տպագիր պատճենով) 2022 թվականի սեպտեմբերի 1-ից նոյեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում.

- Դիմումի ձև - Դիմումի ձևը կարելի է ներբեռնել Yamaha կրթաթոշակի ինտերնետային կայքից կամ ստանալ Yamaha-ի դիստրիբյուտորներից:
- Անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր, ազգային ինքնության քարտ)
- Տեսանյութ YouTube-ի հղումով (Տես Բաժին 5. Տեսանյութերի ներկայացման ուղեցույցներ)

4. Ռեպերտուար

Առաջին լսումների ռեպերտուար
- Դիմորդները պետք է ներկայացնեն նախապես ձայնագրված կատարում՝ տարբեր ոճեր ներկայացնող երկու ստեղծագործություններ
- Ընդհանուր կատարման ժամանակը՝ առավելագույնը 20 րոպե
Վերջնական լսումների ռեպերտուար.
- Ծրագրի ազատ ընտրությունը՝ առավելագույնը 10 րոպե

5. Տեսանյութերի ներկայացման ուղեցույց

- Տեսանյութի լուծաչափը (ռեզոլյուցիա) պետք է լինի առնվազն 1280x720 պիքսել՝ ձայնի բարձր որակով
- Տեսանյութը կարող է ձայնագրվել տեսանկարահանում ապահովող ցանկացած սարքի միջոցով
- Տեսանկարահանման սկզբում դիմորդը պետք է նշի իր անունը,ազգանունը և միջոցառման անվանումը՝ «Yamaha Scholarship Program 2022/23»:
- Դիմորդը պետք է հստակ տեսանելի լինի տեսանյութի վրա՝ նրա անձը նույնականացնելու համար
- Դիմորդը պետք է ուղարկի իր YouTube-յան հղումը իր ձայնագրության հետ միասին: Այն պետք է ներկայացվի «չգրանցված որպես գաղտնի» (unlisted privacy) կարգավորումներով (տեսանելի է միայն տվյալհղում ունեցողներին)
- Երկու ստեղծագործություններն էլ պետք է ձայնագրվեն մեկ դուբլով՝առանց որևէ խմբագրման և վերբեռնվեն որպես մեկ վիդեո ֆայլ:

6. Ժամանակացույց

Սեպտ.22	Հոկտ.22	Նոյեմբ.22	Դեկտ.22	Հունվ.23	Փետրվ.23
Հայտերի ներկայացման ժամանակահատվածը (Սեպտեմբեր 1 – Նոյեմբեր 30)			Ձայնագրված ստեղծագործությունների առաջին լսում	Առաջին լսման արդյունքների հայտարարում	Վերջնական լսում

7. Դիտողություններ

- Վերջնական լսումը կանցկացվի ԱՄԷ կառավարության պաշտոնական առողջապահական կանոնակարգերի համաձայն, և բոլոր մասնակիցները պարտավոր են պահպանել դրանց պահանջները:
- Վերջնական լսմանը մասնակցելու համար դիմորդներից կարող է պահանջվել ներկայացնել առողջական վիճակը հավաստող փաստաթուղթ (օրինակ՝ պատվաստման քարտ, PCR թեստի քաղվածք):
- Միջոցառման բնույթը կարող է փոխվել չնախատեսված հանգամանքների պատճառով, օրինակ՝ այն կարող է անցկացվել առցանց, եթե, կազմակերպչի կարծիքով, դժվար է անցկացնել կենդանի միջոցառում:

Ժյուրիի նախագահ

Riccardo Crocilla (Italy)

Ռիկարդո Կրոչիլան ծնվել է Պալերմոյում 1967 թվականին: Կլարնետ սովորել է նվագել Ջենովայի Պագանինիի Կոնսերվատորիայում՝ Գ. Լարուչիայի դասարանում: Վաղ տարիքում գերազանցությամբ ավարտել է կոնսերվատորիան և սկսել է աշխատել Ջուզեպպե Գարբարինոյի և Թոմաս Ֆրիդլիի հետ: Կալյարիի, Ջենովայի, Տրիեստե, Լոզանի սիմֆոնիկ և օպերային նվագախմբերում նա զբաղեցրել է առաջին կլարնետահարի պաշտոնները, իսկ 1996 թվականից նա եղել է Ֆլորենցիայի Maggio Musicale Fiorentino նվագախմբի գլխավոր կլարնետահարը՝ Զուբին Մետայի ղեկավարությամբ: Նա նաև ելույթ է ունեցել Իտալիայի ռադիոյի և հեռուստատեսության նվագախմբի Պադուայի և Վենետոյի կամերային նվագախմբի, Իսրայելի ֆիլհարմոնիկ նվագախմբի, Պարմայի օպերայի անսամբլի, ֆիլհարմոնիկ նվագախմբի դելլա Սկալայի և Սանտա Սեսիլիա Ակադեմիայի նվագախմբի հետ՝ համաշխարհային առաջատար դիրիժորների ղեկավարությամբ, ինչպիսիք են՝ Մ.Վ. Չունգը, Լ.Մաազելը, Ռ.Մուտին, Զ.Մեհտան, Վ.Սավալիշին, Գ. Սինոպոլին, Կ.Աբբադոն, Գ.Փիթերը:

Նրա՝ որպես մենակատարի կարիերայի կարևոր իրադարձություններից էր Ֆլորենցիայի Palazzo Vecchio-ում Զուբին Մեհթայի դիրիժորությամբ Մոցարտի կլարնետի կոնցերտի կատարումը, ինչպես նաև Սոֆյա Գուբայդուլինայի «Warum?» ստեղծագործության պրեմիերան՝ ֆլեյտայի, կլարնետի և նվագախմբի համար: Պարոն Կրոչիլան հեղինակավոր Premio Galileo 2000 մրցանակի դափնեկիր է որպես ականավոր երիտասարդ իտալացի կատարող:

Նա ձայնագրվել է Arts ձայնագրման, Columna musica-ի, NBB records-ի և Idyllium-ի համար և Yamaha կլարնետի, D'Addario reeds-ի և Zac ligature-ի սիրահար է:

Yamaha Music Gulf.

1997 թվականին հիմնադրված Yamaha Music Gulf FZE-ն (YMGF) առաջարկում է Yamaha երաժշտական գործիքների, պրոֆեսիոնալ և կոմերցիոն նպատակներով աուդիո սարքավորումների, աուդիովիզուալ արտադրանքների, ինչպես նաև երաժշտական դպրոցի գործունեության ամբողջական փաթեթ, որի գրասենյակները գտնվում են Դուբայում, Միացյալ Արաբական Էմիրություններում (ԱՄԷ): YMGF-ն ճապոնական Yamaha կորպորացիայի 100% դուստր ձեռնարկությունն է և ներառում է Աֆրիկայի, ԱՊՀ-ի, Մերձավոր Արևելքի և Արևմտյան Ասիայի տարածաշրջանները:

Լրացուցիչ տեղեկություն ստանալու համար

Yamaha Music Gulf FZE
Փոստարկղ 17328, Ջեբել Ալի ՖՋԵ Դուբայ, ԱՄԷ
ymgf-scholarship-smb@music.yamaha.com
www.mea.yamaha.com
P82201795